Հավելված N 2
ՀՀ կառավարության 2023 թվականի
հուլիսի 20-ի N 1237 - Լ որոշման

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԼԱԲՈՐԱՏՈՐ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԻՑ ԲԽՈՂ
2023-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ

| NN ը/կ | **Գործողություն/Միջոցառում** | **Ակնկալվող արդյունքը** | **Ժամկետը** | **Պատասխանատու կատարող-համակատարողները** | **Վերստուգելի չափանիշները** | **Ֆինանսական աղբյուրը** |
|---|---|---|---|---|---|---|
| 1. | Լաբորատոր ոլորտը կարգավորող օրենսդրության գույքագրում, բացերի վերլուծության իրականացում | Լաբորատոր գործունեության համար իրավական հիմքերի ապահովում, ազգային և միջազգային պահանջների ներդաշնակեցում, լաբորատոր արդյունքների փոխճանաչելիության ապահովում | 2023 թ. դեկտեմբերի 1-ին տասնօրյակ | Առողջապահության նախարարություն<br><br>Էկոնոմիկայի նախարարություն<br><br>Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն<br><br>Պաշտպանության նախարարություն<br><br>Արդարադատության նախարարություն | 1. Լաբորատոր ոլորտը կարգավորող փոփոխության ենթակա իրավական ակտերից՝ վերանայված և արդիականացված իրավական ակտերի մասնաբաժինը (%),<br><br>2. Մշակման ենթակա նախատեսված իրավական ակտերից նոր մշակված իրավական ակտերի մասնաբաժինը (%) | Ֆինանսավորում չի պահանջվում |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն<br>Ներքին գործերի նախարարություն<br><br>Ազգային անվտանգության ծառայություն<br>Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին | | |
| 2. | «ՀՀ կառավարության 2002 թվականի հունիսի 29-ի N 867 և ՀՀ կառավարության 2008 թվականի մարտի 27-ի N 276-Ն որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Կառավարության որոշումների նախագծերի ներկայացում Վարչապետի աշխատակազմ | Լաբորատոր գործունեության տեսակների և դրանց իրականացման նվազագույն պահանջների արդիականացում՝ միջազգային չափանիշներին համապատասխան, մասնագետների որակավորման պահանջների վերանայում, լաբորատոր մասնագետների մոտ ռիսկերի կառավարման վրա հիմնված մտածելակերպի ձևավորում, | 2024 թ. դեկտեմբերի 1-ին տասնօրյակ | Առողջապահության նախարարություն<br><br>Էկոնոմիկայի նախարարություն<br><br>Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն<br><br>Պաշտպանության նախարարություն<br><br>Արդարադատության նախարարություն<br><br>Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն<br>Ներքին գործերի նախարարություն | 1. Լաբորատոր գործունեության տեսակների և դրանց իրականացման նվազագույն պահանջների առկայություն՝ ըստ լաբորատորիաների մակարդակների | Ֆինանսավորում չի պահանջվում |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | լաբորատոր անվտանգ գործունեության ապահովում՝ըստ գործունեության վտանգավորության աստիճանի | | Ազգային անվտանգության ծառայություն<br>Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին | | |
| 3. | Ազգային լաբորատոր համակարգի գործունեության ապահովմանն ուղղված օրենսդրության բարեփոխումների մասին շահառուներին իրազեկում | Լաբորատոր գործունեության օրենսդրության բարեփոխումների վերաբերյալ շահառու կողմերի իրազեկվածություն | 2025 թ. նոյեմբերի 1-ին տասնօրյակ | Առողջապահության նախարարություն<br><br>Էկոնոմիկայի նախարարություն<br><br>Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն<br><br>Պաշտպանության նախարարություն<br><br>Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն<br>Ներքին գործերի նախարարություն<br><br>Ազգային անվտանգության ծառայություն<br>Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին | 1. Լաբորատոր գործունեության վերաբերյալ ԱՆ պաշտոնական կայք էջում համապատասխան բաժնի առկայություն (բոլոր իրավական ակտերի առկայություն՝ ներառյալ պարբերաբար թարմացումները) | Ֆինանսավորում չի պահանջվում |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 4. | ««Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ներկայացում Վարչապետի աշխատակազմ | Լաբորատոր գործունեության համակարգում | 2024 թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ | Առողջապահության նախարարություն<br><br>Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն<br><br>Պաշտպանության նախարարություն<br><br>Արդարադատության նախարարություն<br><br>Ներքին գործերի նախարարություն<br><br>Ազգային անվտանգության ծառայություն<br>Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին | 1. «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքում առողջապահության ոլորտի լաբորատոր համակարգի զարգացման 2023-2026 թվականների ծրագրով նախատեսված միջոցառումների կատարման համար իրավական հիմքերի (լիազորող նորմերի) սահմանում | Ֆինանսավորում չի պահանջվում |
| 5. | «Հայաստանի Հանրապետությունում լաբորատոր ախտորոշիչ բժշկական օգնության և սպասարկման գործունեություն իրականացնող կազմակերպությունների ռեեստր ձևավորելու և վերջինիս վարման կարգը հաստատելու մասին» Հայաստանի | Լաբորատոր կարողությունների վերաբերյալ թվայնացված, կանոնակարգված և համապարփակ տեղեկատվության հասանելիություն | 2025 թ. մարտի 1-ին տասնօրյակ | Առողջապահության նախարարություն<br><br>Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն<br><br>Պաշտպանության նախարարություն | 1. Լաբորատորիաների և վերջիններիս գործունեության վերաբերյալ՝<br><br>1) ծրագրային ապահովման համակարգի առկայություն<br><br>2) ռեեստրում ներառված և պահանջվող տեղեկատվության հարաբերակցությունը (%) | Ֆինանսավորում չի պահանջվում |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Հանրապետության կառավարության որոշման նախագծի ներկայացում Վարչապետի աշխատակազմ | | | Արդարադատության նախարարություն<br><br>Ներքին գործերի նախարարություն<br>Ազգային անվտանգության ծառայություն<br>Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին | | |
| 6. | «Լաբորատոր հետազոտությունների ֆինանսական ինքնարժեքի հաշվարկման ստանդարտ գործիքի» մշակում և Առողջապահության նախարարի հրամանով հաստատում | Լաբորատոր հետազոտությունների ինքնարժեքի ֆինանսական հաշվարկման գործընթացի միասնական մոտեցում և լաբորատոր ծառայությունների գնարժեքի հիմնավորում | 2025 թ. հունիսի 3-րդ տասնօրյակ | Առողջապահության նախարարություն<br><br>Ֆինանսների նախարարություն<br><br>Էկոնոմիկայի նախարարություն<br><br>Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն<br><br>Պաշտպանության նախարարություն<br><br>Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն<br>Ներքին գործերի նախարարություն | 1. Տվյալ տարվա ընթացքում պետական պատվերի շրջանակներում լաբորատոր ծառայություններից՝ ֆինանսական ինքնարժեքի հաշվարկման գործիքով հաշվարկված գնարժեքով ծառայությունների մասնաբաժինը (%) | Ֆինանսավորում չի պահանջվում |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | Ազգային անվտանգության ծառայություն | | |
| 7. | Քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 10-ի թիվ 95-Ն հրամանում փոփոխություններ և լրացումներ նախատեսող իրավական ակտի մշակում և ընդունում | Լաբորատոր գործունեության որակի ու անվտանգության բարձրացում՝ շենքային և ենթակառուցվածքների արդիականացմամբ | 2026 թ. փետրվարի 1-ին տասնօրյակ | Քաղաքաշինության կոմիտե<br><br>Առողջապահության նախարարություն<br><br>Էկոնոմիկայի նախարարություն<br><br>Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն<br><br>Պաշտպանության նախարարություն<br><br>Արդարադատության նախարարություն<br><br>Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն<br>Ներքին գործերի նախարարություն<br><br>Ազգային անվտանգության ծառայություն<br>Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին | 1. Լաբորատորիաների շենքերի տեղակայմանը, լրակազմին և մակերեսներին և ենթակառուցվածքներին ներկայացվող պահանջների առկայություն՝ սահմանված **ՀՀՇՆ 31-03- «Հասարակական շենքեր և շինություններ» Հայաստանի Հանրապետության շինարարական նորմերով** | Ֆինանսավորումը նախատեսված է Քաղաքաշինության կոմիտեի 2023-2024թթ., պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրերի (ՄԺԾԾ) հայտով հաստատված բյուջեով՝ 7 մլն դրամ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 8. | «Լաբորատորիաներում կադրերի վարման ընթացակարգը և լաբորատոր ոլորտի մասնագետների պաշտոնների օրինակելի նկարագրերը»՝ ներառելով լաբորատոր որակի և կենսաանվտանգության ապահովմանն ուղղված պահանջներ սահմանող Առողջապահության նախարարի հրամանի մշակում և ընդունում | Լաբորատորիաներում կադրերի վարման քայլ առ քայլ նկարագրի փաստաթղթավորում | 2025 թ. հոկտեմբերի 2-րդ տասնօրյակ | ՀՀ Առողջապահության նախարարություն | 1. «Լաբորատորիաներում կադրերի վարման ընթացակարգի և լաբորատոր ոլորտի մասնագետների պաշտոնների օրինակելի նկարագրի» առկայություն | Ֆինանսավորում չի պահանջվում |
| 9. | Լաբորատոր գործունեություն իրականացնող մասնագետների պատրաստման կրթական ծրագրերում լաբորատոր որակին ու կենսաանվտանգությանն առնչվող պահանջների ներառում | Լաբորատոր գործունեություն իրականացնող մասնագետների պատրաստման կրթական ծրագրերի արդիականացում՝ ներառելով լաբորատոր որակին ու կենսաանվտանգությանն առնչվող պահանջներ | 2024-2026 թթ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ | Առողջապահության նախարարություն<br><br>Ֆինանսների նախարարություն<br><br>Էկոնոմիկայի նախարարություն<br><br>Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն<br><br>Պաշտպանության նախարարություն | 1. Լաբորատոր գործունեություն իրականացնող մասնագետների պատրաստման կրթական ծրագրերի առկայություն՝ ներառյալ լաբորատոր որակին ու կենսաանվտանգությանն առնչվող պահանջներ | Ֆինանսավորում չի պահանջվում |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն<br>Ներքին գործերի նախարարություն<br><br>Ազգային անվտանգության ծառայություն<br>Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին | | |
| 10. | Լաբորատորիաներում չափման միջոցների, սարքերի և սարքավորումների չափագիտական հսկողության զարգացում: Հայաստանի Հանրապետության չափումների միասնականության համակարգը զարգացնել անհրաժեշտ տրամաչափարկման լաբորատոր կարողություններով, որոնք մաս կկազմեն չափումների միասնականության ապահովման միջազգային համակարգին և որոնց չափումները կլինեն հետևելի միջազգային չափանմուշներին և կունենան միջազգային հավատարմագրում | Չափման միջոցների չափումների միջազգայնորեն հետևելիության ապահովում՝ ազգային մակարդակում | 2025-2026 թթ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ | Էկոնոմիկայի նախարարություն<br><br>Առողջապահության նախարարություն<br><br>Տարածքային կառավարման և զարգացման նախարարություն<br><br>Պաշտպանության նախարարություն<br><br>Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն<br>Ներքին գործերի նախարարություն<br><br>Ազգային անվտանգության ծառայություն | 1. Միջազգային հավատարմագրում ունեցող տրամաչափարկման մեկ լաբորատորիայի առկայություն | Ֆինանսավորումը՝ Համաշխարհային բանկի առևտրի խթանում և որակի ենթակառուցվածքնե րի ծրագիր,<br>ԵՄ և ՄԱԿ արդյունաբերական զարգացման կազմակերպության հետ ստորագրված դրամաշնորհային ծրագրի շրջանակներում (Հայաստանի որակի ենթակառուցվածքի աջակցություն) |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին | | |
| 11. | Առողջապահության նախարարի 2017 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 3737-Ա հրամանում փոփոխություններ և լրացումներ նախատեսող իրավական ակտի մշակում և ընդունում | Չափման միջոցների չափումների միջազգայնորեն հետնելիության ապահովում լաբորատորիաներում | 2024 թ. մայիսի 3-րդ տասնօրյակ | Առողջապահության նախարարություն<br>Էկոնոմիկայի նախարարություն<br><br>Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն<br><br>Պաշտպանության նախարարություն<br><br>Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն<br>Ներքին գործերի նախարարություն<br>Ազգային անվտանգության ծառայություն<br>Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին | 1. Վերանայված իրավական ակտի առկայություն<br><br>2. Լաբորատորիաներում սարքերի կառավարմանն ուղղված գնահատման հաշվետվություն (առնվազն ներկայացուցչական 60 լաբորատորիայի մասնակցությամբ) | Ֆինանսավորում չի պահանջվում |
| 12. | Լաբորատոր կառավարման տեղեկատվական համակարգի ներդնում՝ լաբորատոր հետազոտական տվյալների ներմուծման և | Լաբորատոր տեղեկատվության թվայնացում, կենտրոնացում, անվտանգ | 2026 թթ. հունիսի 3-րդ տասնօրյակ | Առողջապահության նախարարություն | 1. Լաբորատոր կառավարման տեղեկատվական էլեկտրոնային համակարգի | ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | վերլուծական հաշվետվությունների արտածման հնարավորությամբ և այն նաև համաժամանակացնել (սինխրոնիզացնել) գործող էլեկտրոնային համակարգերի հետ՝ միջազգային պահանջներին համապատասխան | կառավարում, արագ արձագանքում | | Էկոնոմիկայի նախարարություն<br><br>Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն<br><br>Պաշտպանության նախարարություն<br><br>Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն<br><br>Ներքին գործերի նախարարություն<br><br>Ազգային անվտանգության ծառայություն<br>Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին | առկայություն՝ էլեկտրոնային առողջապահության համակարգում, որը կներառի լաբորատոր հետազոտությունների վերաբերյալ սպառիչ տեղեկատվության մուտքագրման և վերջիններիս վերլուծական հաշվետվությունների դաշտեր<br>2. Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների կողմից՝ լաբորատոր հետազոտությունների վերաբերյալ լրացված մուտքային տվյալներ<br><br>3. Լաբորատոր տեղեկատվության վերլուծության հնարավորություն | |
| 13. | Լաբորատորիաների որակի արտաքին գնահատման ազգային ծրագրի մշակում և Առողջապահության նախարարի հրամանով հաստատում | Լաբորատոր գործունեության որակի հսկողություն, լաբորատոր մասնագետների կրթական կարիքների գնահատում | 2025 թ. հունիսի 3-րդ տասնօրյակ | Առողջապահության նախարարություն<br><br>Էկոնոմիկայի նախարարություն | 1. Լաբորատոր գործունեության որակի արտաքին գնահատման քաղաքականության և կարողությունների առկայություն<br>2. Լաբորատոր որակի արտաքին | Ֆինանսավորում չի պահանջվում |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն<br><br>Պաշտպանության նախարարություն<br><br>Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն<br>Ներքին գործերի նախարարություն<br>Ազգային անվտանգության ծառայություն<br>Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին | գնահատման ծրագրի/ների առկայություն | |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

21.07.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ